ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

THE DEPUTY MINISTER OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA-
HEAD OF LOGISTIC SUPPORT DEPARTMENT
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ

0044, ք. Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: spitak151@rambler.ru
Հեռ. (+37410) 29-43-97
Ֆաքս (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5
E-mail: spitak151@rambler.ru
Tel. Тел. (+37410) 29-43-97
Fax. Факс (+37410) 29-46-13

№ ՎՅԿ/1682

«17» 06 2016թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի ՊԵՏ
պարոն Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/68» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված բացասական եզրակացության վերաբերյալ հայտնում եմ, որ գնման առարկա հանդիսացող ծխախոտը ներառված է ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 5-ի N 950-Ն որոշման գնումների միասնական անվանացանկի (ԳՄԱ) «15000000» թվային դասակարգչում՝ սննդամթերքի, ըմպելիքի և հարակից արտադրանքի հետ միասին, այսինքն, դրանք ընդգրկված են միևնույն խմբում, բացի այդ ՀՀ Ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի 1.2.27 կետը (այլ սննդամթերք) հնարավորություն է տալիս դրա մեջ ընդգրկել սննդամթերքի ներկայացված ցանկում չներառված, սակայն տվյալ խմբին պատկանող ապրանք, իսկ ծխախոտը, մեր կարծիքով, կարող է դիտվել այդպիսի ապրանք: Բացի այդ, հաստատված գնումների պլանում որպես ծխախոտի գնման ձև սահմանված է «ՇՀ»: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ նույն հիմնավորումով մինչև այժմ ծխախոտի գնումը իրականացվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի միջոցով:

Հարգանքով՝

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ